* * *

Ինչքան էլ խաբէք, աղջիկներ սիրուն,
Իմ խաբուած սիրտը սիրում է այնքան,
Կեանքում ծաղիկն է մի անգամ սիրում,
Խղճուկ ծաղկունքն են սիրում մի անգամ,
Քանզի ապրում են հազիւ մի գարուն,
Ես ձեզ սիրում եմ՝ ինչքան էլ փախչէք,
Ես միշտ զարկերակ, սէրը՝ միշտ արիւն,
Զեզնից կը փախչեմ, որ ինձ ետ կանչէք,
Որպէս ձիւներից դուրս ցայտող գարուն:

* * *

Ի՞նչ ունես փըշոտ,
Մութ թըփերի տակ,
Ես քեզ եմ կարօտ,
Իմ հեզ մանուշակ:

Դու կը թառամես՝
Ընկած գրկէ-գիրկ,
Լոկ ինձ կը վառես,
Մէկ էլ քեզ լըռիկ:

Դրսում ի՞նչ ունես,
Խարուող մանուշակ,
Ե՞րբ պիտի բուրես
Իմ թեւերի տակ...

* * *

Երբ սովից մանուկ իմ սիրտն էր ցաւում՝
Մի ծով կարօտից՝ մի կաթիլ հացի,
Ինձ բանտի մըռայլ պարիսպ էր թըւում
Սարերի բարձրը չղթան դիմացի:

Եւ հիմա երբ որ ինձ կինն է դաւում,
Պոկում էք երդիս թեւերն առնացի՝
Երկինքն ինձ բանտի տանիք է թըւում,—
Լուսինն՝ ինձ խարող դէմքը կանացի...

Ց. ՇԻՐԱԶ

© National